Արագացնել փրկության աշխատանքը

Խորհեք հետևյալ հարցերի շուրջ՝ կապված հինգ ոլորտներից յուրաքանչյուրի հետ, որոնք փրկության աշխատանքի մի մասն են.

- Ինչպե՞ս կարող են Աստծո աշխատանքի այս ոլորտում ձեր ներդրած ջանքերը ուրիշներին մոտեցնել փրկության օրհնություններին:
- Դուք ի՞նչ փորձառություններ եք ունեցել և ի՞նչ օրհնություններ եք ստացել, երբ մասնակցել եք Տիրոջ փրկության աշխատանքի այս ոլորտին:
- Դուք ի՞նչ կարող եք անել՝ անկախ Եկեղեցու ձեր ներկայիս կոչումից, որպեսզի աջակցություն ցույց տաք փրկության աշխատանքի այս ոլորտին:

Անդամների միսիոներական աշխատանքը

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենն ուսուցանել է.

«Եղբայրներ և քույրեր, անշուշտ Տերն ունի ավելի շատ ոգեշնչված միսիոներներ ծառայության համար, բայց Նա նաև արթնացնում է շատ ավելի բարի և ազնիվ մարդկանց մտքերը և սրտերը՝ Իր միսիոներներին ընդունելու համար: Դուք արդեն գիտեք նրանց կամ կծանոթանաք նրանց հետ: Նրանք ձեր ընտանիքներում և ձեր հարևանների մեջ են: Նրանք անցնում են ձեր կողքով փողոցում, նստում են ձեր կողքին դպրոցում և շփվում են ձեզ հետ համացանցում: Դուք շատ կարևոր մաս եք այս բացվող հրաշքում:

Եթե դուք լիաժամկետ միսիոներ չեք և ձեր բաճկոնին չեք կրում միսիոներական կրծքանշան, այժմ ժամանակն է, որ գրեք մեկը ձեր սրտին, գրեք, ինչպես Պողոսն է ասում, «ոչ թէ թանաքով, այլ կենդանի Աստուծոյ Հոգովը» [Բ Կորնթացիս Գ.3]: . . .Բոլորս պետք է ունենանք մեր ներդրումն այս հրաշքի մեջ» (“It’s a Miracle,” *Ensign* or *Liahona,* May 2013, 78):

Նորադարձների պահպանումը

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը հայտարարել է.

«Ես և դուք պետք է անենք ամենը, ինչ կարող ենք, որպեսզի տեսնենք, որ Եկեղեցու յուրաքանչյուր անդամ գտնում է լիարժեք ընկերակցություն և վայելում է բոլոր օրհնությունները, որ ավետարանը կարող է առաջարկել:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին հիշեցրել է ձեզ և ինձ Տիրոջ գործընկերը լինելու մեր պարտականության մասին՝ իրականացնելու Եկեղեցու հետ կապված Նրա ծրագրերը: Արբանյակային հեռարձակման միջոցով Նախագահ Հինքլին ասել է.

«Տերը մեզ հանձնարարագիր է տվել ուսուցանելու ավետարանն ամեն արարածի: Սրա համար կպահանջվեն թե լիաժամկետ, թե ցցի յուրաքանչյուր միսիոների լավագույն ջանքերը: Այն կպահանջի յուրաքանչյուր եպիսկոպոսի, յուրաքանչյուր եպիսկոպոսի խորհրդականի, ծխի խորհրդի յուրաքանչյուր անդամի լավագույն ջանքերը» (‘Find the Lambs, Feed the Sheep,’ *Ensign,* May 1999, 107): Այն կպահանջի յուրաքանչյուր անդամի լավագույն ջանքերը» (“Members Are the Key,” *Ensign,* Sept. 2000, 10):

Քիչ ակտիվ անդամների ակտիվացումը

«Մեր դերն է՝ ընկղմվել մեր շուրջը գտնվողներին սիրելու և ծառայելու մեջ՝ սփոփել կարիքի մեջ գտնվող մեր աշխատակցին, հրավիրել մեր ընկերներին մկրտության, օգնել տարեց հարևանին այգու գործերում, հրավիրել քիչ ակտիվ անդամին ճաշի կամ օգնել մերձավորին՝ կատարել իր ընտանեկան պատմության աշխատանքը: Սրանք բոլորը բնական, ուրախությամբ լի ճանապարհներ են, որոնցով կարելի է մեր կյանք հրավիրել քիչ ակտիվ անդամներին և նրանց, ովքեր մեր հավատքից չեն և, հետևաբար, դեպի ավետարանի լույսը: Նրանց հետ ուրախ ժամանակի և մեր կյանքի սուրբ պահերի անցկացումը իրականում կարող է լինել առավել արդյունավետ եղանակը, որով բոլորս կարող ենք աշխատել Հիսուս Քրիստոսի «այգում՝ մարդկանց հոգիների փրկության համար» (ՎևՈւ 138.56)» («Արագացնել փրկության աշխատանքը», *Ensign,* հոկ. 2013, 36):

Տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Քվենթին Լ Քուքը ուսուցանել է.

Եկեղեցու ղեկավարությունը պարզ կերպով կոչ է արել աճող սերնդին ունենալ իրենց նախաձեռնությունը տեխնոլոգիայի կիրառման մեջ՝ Եղիայի ոգին զգալու, իրենց նախնիներին փնտրելու և նրանց համար տաճարային արարողություններ կատարելու համար: Ողջերի ու մահացածների փրկության աշխատանքն արագացնելու դժվար մասը կատարվելու է ձե՛ր միջոցով, երիտասարդնե՛ր» («Արմատներ և ճյուղեր», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2014, 46):

© 2015 BY INTELLECTUAL RESERVE, INC. ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐՍՊԱՍԱՎՈՐ ԵՆ:

Ուսուցանել ավետարանը

«Ավետարանն ուսուցանելու պարտականությունը չի սահմանափակվում՝ տրվելով միայն նրանց, ովքեր ունեն պաշտոնական կոչում որպես ուսուցիչներ: Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ դուք պարտականություն ունեք ուսուցանելու ավետարանը: Որպես ծնող, որդի, դուստր, ամուսին, կին, եղբայր, քույր, Եկեղեցու ղեկավար, դասարանի ուսուցիչ, տնային ուսուցիչ, այցելող ուսուցիչ, աշխատակից, հարևան կամ ընկեր, դուք ունեք ուսուցանելու հնարավորություններ: Երբեմն դուք կարող եք բացահայտ կերպով ուսուցանել հենց ձեր ասածների և ձեր բերած վկայության միջոցով: Եվ դուք միշտ ուսուցանում եք օրինակով» (*Ուսուցում, չկա ավելի մեծ կոչում. Ռեսուրսային Ուղեցույց Ավետարանի ուսուցման համար* [1999], 3–4):

© 2015 BY INTELLECTUAL RESERVE, INC. ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԵՆ: